Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
նոյեմբերի 9-ի N 322 - Ա որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր
## «ԱԿԱՆԻ/ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության տարածքում ական/պատերազմի պայթուցիկ մնացորդների զոհերի ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ)՝ ներդնում է 84000000 դրամ, «Փուլեր» տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն՝ 66000000 դրամ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Փուլեր» տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>(ՀՀ, քաղ. Երևան, Ա. Տիգրանյան 53, բն. 26, ՀՎՀՀ՝ 01009537): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում՝ քաղաքաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 150000000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության տարածքում ական/պատերազմի պայթուցիկ մնացորդների զոհերի ընտանիքներ, որոնք չունեն բնակարան կամ ունեն անավարտ կամ վերանորոգման անհրաժեշտություն ունեցող տուն: Նրանց ընտրությունը կատարվում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ցուցակների հիման վրա՝ «Փուլեր» տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ուսումնասիրության արդյունքում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2018 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ԿԽԿՄ-ի կողմից ներկայացված ցուցակներից կատարվում է ընտանիքների ընտրություն՝ առաջնությունը տալով առավել կարիք ունեցողներին: Ընտրված ընտանիքների հետ կնքվում են փոխառության և հիփոթեքի պայմանագրեր, ապա սկսվում է ֆինանսավորումը՝ փուլ առ փուլ: Ծրագրի արժեքը՝ 150000000 դրամ է, որն ունի հետևյալ բացվածքը՝<br>- դրամական փոխառություններ՝ բնակարան և շինանյութ գնելու համար՝ 120000000 դրամ.<br>- կազմակերպչական ծախսեր՝ 30000000 դրամ, որից մեքենայի գնում և ներմուծում՝ «TOYOTA LC HARDTOP DIESEL HZJ78L» մակնիշի՝ 3200000 դրամ, մեքենայի գործարքի համար ակնկալում ենք հարկային արտոնություններ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսված է միայն «TOYOTA LC HARDTOP DIESEL HZJ78L» մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում և ներմուծում, որը ծառայելու է կազմակերպության կողմից իրականացվող և հետագայում իրականացվելիք բարեգործական ծրագրերի շրջանակներում, և արժեքը կազմում է 3200000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսերը կազմում են 30000000 դրամ, որն ունի հետևյալ բացվածքը՝<br><br>1) աշխատավարձի ֆոնդ — 19089000 դրամ.<br>2) մեքենայի ձեռքբերում — 3210000 դրամ.<br>3) հաղորդակցության միջոցներ — 195000 դրամ.<br>4) գործուղումներ — 765000 դրամ.<br>5) ամորտիզացիա — 123000 դրամ.<br>6) տրանսպորտային միջոցների պահպանում և վերանորոգում — 981000 դրամ.<br>7) կոմունալ ծառայություններ — 360000 դրամ.<br>8) գրասենյակի վարձակալություն և սպասարկում — 3189000 դրամ.<br>9) հաղորդակցություն և գովազդ — 468000 դրամ.<br>10) բանկային ծախսեր — 306000 դրամ.<br>11) այլ (փաստաբանական, ժողովներ, ներկայացուցչական…) — 1314000 դրամ.<br>Ընդամենը — 30000000<br>Կազմակերպչական ծախսերը չեն գերազանցում ծրագրի 20 տոկոսը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ՏԻՄ-երի հետ |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություններ են ներկայացվում ԿԽՄԿ-ին, «Ֆուլեր» տնաշինական կենտրոնի միջազգային գլխամասային գրասենյակին, ինչպես նաև Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՄԻՐՋՈՅԱՆ